

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնային համար Զարեհակ 12 փր.
» » Վեցամսեայ 6 փր.
Առաստաղակների համար (երկու քիւր մեկ
ծարձով) Զարեհակ 14, վեցամսեայ 7 փր.
Պատկերային » 2.60 տղ. վեցամս 1.50
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Համակ գրամ եւայլն զրկել հետեւեալ հասցեով
ИПРАВНОУЮ «ІРАВНІКЪ» ІРАУНОБ. — В.У.Н. (Պուկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
„Иравункъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
եւ չեն զրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
տոյնովին կամ մասամբ:
Մանուցման տղը 20 սանթիմ. երե-
փեկ աւելի անգամներու համար 20 0/0
գնդ կը լինի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՆԵՐՈՅԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԼԵՑ

Վարժարանիս աշակերտ տալ
փափաքող պատուարժան ծնողաց
կը յայտարարեմ որ Հայկական
կրթարանի Գ. տարեշրջանի կսկսի
յառաջիկայ սեպտեմբեր 1ին, մի-
նոյն րնդարձակ եւ օգտասուն չէն.
քին մէջ, առանց ծրագրի փոփոխ
ման եւ օժանդակութեամբ միեւ-
նոյն ուսուցչական մարմնոյն՝ որուն
պիտի ընկերանայ նաեւ ֆեանսա-
ցի ընդհանուր հսկող մը:

Հրացուցիչ դասընթացքի աշա-
կերտներուն համար ուսման առար-
կաներու մեծագոյն մասը պիտի
դասախոսուի ֆռանսերէն լեզուով.
Դասաւանդութեան միեւնոյն եղա-
նակը, աւելի նեղ սահմանի մէջ
ուստիճանաբար, ի գործ պիտի
դրուի բարձրագոյն ու միջին դա-
սընթացքներուն համար:

Ուսմանց ու գիտութեանց բոլոր
կարեւոր ճիւղերը կաւանդուին:

Օտար լեզուներէն պարտաւորիչ
են Պոլսկարերէնը եւ ֆրանսերէնը,
իսկ կամաւոր են Անգլիերէնը եւ
Գերմաներէնը, որոնք պիտի դա-
սախոսուին ֆրանսերէնով:

Չունակի եւ դաշնակի դասեր
ալ կը տրուին մասնաւոր վճարում.
ներով:

Գիշերօթիկներու համար առողջ
անուշ, կատարեալ մաքրութիւն
եւ բնական խնամք:

Տարեթոշակներուն համար պատ-
րաստ եմ ամէն դիւրութիւն րնծա-
լիլ, եթէ անոնց կանոնաւոր վճա-
րումը կանխաւ ապահովուի ու եւ
միջցաւ:

Հայկական կրթարանի
Հիմնադիր-Տնօրէն
Կրօն Միքայէլեան

ՎԱՐՃԱՊԵՏԱՆՈՅԸ

Վերջերս Պոլսոյ Պատրիարքա-
րանը սկսած է յուր կերպով զրա-
ղի վարժապետանոց մը հաստա-
տելու ծրագրով: Ուսուցչական
խորհուրդը այս նպատակը յառա-
ջացնելու համար գործնական քա-
յի ալ առնել սկսած է, արդէն
բանակցութեանց մտած ըլլալով
Պոլսոյ կեդրոնական վարժարանի
խնամակալութեան հետ:

Նոյն Ուսուցչական խորհուրդը
քանի մը ամիսներ առաջ, վար-
ժապետանոց մը հիմնելու ծրագրի-
ն շատ հսկայ տեսնելով, աւելի
համեստ ձեռնարկ մը ըրած էր:

ուսուցիչներու համար կիրակնօր
հայ դասախոսութիւններ հաստա-
տելով: Բայց այդ քանի մը ամ-
սուան փորձը ցոյց տուաւ թէ նր-
շանակելի արդիւնք մը այդ կեր-
պով չպիտի կրնայ ձեռք բերուիլ:
ուստի մեր ուսուցչական դասա-
կարգին մէջ հիմնական բարեշր-
ջում մը յառաջ բերելու նպատակաւ
կրկին վարժապետանոց մը հաստա-
տելու գործը ձեռք առնուցաւ: Սա
կայն այս անգամ ալ ուրոյն
վարժապետանոցի մը համար
պէտք եղած նիւթական զոհո-
ղութեանց մեծութիւնը ինկատ
առնելով, կը ջանայ մէկ գնդակով
երկու թռչուն զարնելու ծրագիրը
ուսուցչական շարքի մը վարժա-
պետանոցի ձեռք մը տալ, անոր
բարձրագոյն կարգերուն մէջ ման-
կավարժական դասեր ալ ներմուծե-
լով եւ այդ հաստատութիւնը ուղ-
ղակի Ուսուցչական Խորհուրդի ի-
րաւասութեան տակ առնելով:

Պատրիարքարանի այս ծրագրի-
ն արդէն իր հակառակորդները
ունի: Բացի կեդր. վարժարանի
խնամակալութեանց Պոլսոյ մա-
մուլին մէկ ազդեցիկ մասն ալ բը-
նաւ չի ներեր մէկ գնդակով երկու
թռչուն զարնելու այդ ծրագրին,
իրաւամբ նկատել տալով թէ մէկ
կատարեալը երկու անկատարէն լաւ
է, կամ թէ երկու նպատակակէտի
հասցնել ուղուած գնդակը կրնայ
երկուքէն միանգամայն չեղիլ:

Այս պարագային Պատրիարքա-
րանի ամենէ աւելի մտածում պատ-
ճառողը նիւթական զփուարութիւ-
նն է, որ ամեն ազգագուտ ձեռ-
նարկի մէջ մեր պաշտօնական մար-
մնոց առջեւ կը ցցուի:

Այդ զփուարութեան յաղթելու
կարեւոր միջոց մը ցոյց տալ կը
կարծենք, առաջարկելով որ վար-
ժապետանոց մը հաստատելու ձեռ-
նարկը միայն Պոլսոյ Պատրիար-
քարանի վրայ չի ծանրանայ, այլ
էլ միաժամայ, Երուսաղէմայ եւ Սը-
սոյ աթոռներն եւ արտասահմանի
հարուստ թեմերն ալ իրենց բա-
ժինը ունենան այդ զփուարատար
բեռան ծանրութիւնը թեթեւցնե-
լու մէջ:

Այդ Ազգ. եկեղեցական Աթոռ-
ները իբրեւ կրօնական հաստատու-
թիւններ ամեն եկամուտ եւ ամէն
հասցիով՝ որոնք բերաւոր ու
կրկնու կը հասնին, կապած են
իրենց աթոռի ոտքին եւ ամենը
իրենց տրամադրութեան աակ ժա-

նադաւորաց կամ կղերականներու
յատուկ վարժարաններ հաստատած
են: անոնց բաւական ծախքեր ալ
կընեն, սակայն առանց նշանակե-
լի արգասիք ցոյց տալու, բացի
Արմաշու Դպրեմանքէն: Էլ միաժամ
այժմ իւր ունեցած կղերանոցնե-
րէն զատ նորեր կուզէ հաստատել:
Երուսաղէմայ վանքը ժառանգաւոր-
բայ վարժարանին անունով ահա-
գին ծախքեր կընէ, նոյնպէս Մի-
սի աթոռը: Բայց ո՞ր են ասոնց
պատրաստած արժանաւոր վեղա-
րաւորները եւ քահանաները, ե-
թէ կան ալ մատը վրայ կը հա-
րուին: այնպէս որ եթէ Արմաշի
վերջին տարիներու մէջ դուրս
տուած նորեմաները չըլլային,
գաւառները առաջնորդ կամ տե-
ղապահ զրկելու արժանաւոր վար-
ժապետներ գտնել դժուար կամ
անկարելի պիտ' ըլլար:

Ուրեմն ինչ պէտքի կը ծառա-
յին այդչափ կղերանոցները, մինչ-
դեռ ասդին վարժապետանոց մը
հաստատելու զփուարութիւն կը
կրուի: Կարծեմ հոս բացատրել
աւելորդ է թէ մեր ազգային բա-
րեշրջումին համար այժմ կրօնա-
կանէ աւելի բանիքուն եւ իր կո-
չումին մարդը եղող աշխարհական
ուսուցիչներու պէտք ունինք:

Մենք այս տողերով չենք ուզեր
ըսել թէ կղերանոցները զոցնեք
ու միայն վարժապետանոց հաս-
տատունք: ոչ, այլ կուզենք ըսել
թէ պէտք եղած թուով միայն
կղերանոցներ ունենանք, որոնք
գոյութեան իրաւունք ունեցած
ըլլան իրենց ցոյց տուած արդիւն-
քով: Իսկ անդին անպետ եւ ազ-
գին կամ Աթոռին վրայ միայն
բեռ մը եղող սուս-սիգաւ ժա-
նադաւորաց վարժարանները դադ-
րին գոյութենէ, ինչպէս Երուսա-
ղէմայ, Սիսի եւ ալ կղերանոցնե-
րը: Կարծենք ազգին համար կը
բաւէ մէկ էլ միաժամ մէջ եւ մէկ
ալ Պոլսոյ Պատրիարքարանի հո-
վանաւորութեան տակ Արմաշինը
ունենալ: Իսկ միւսները գոյութե-
նէ դադրելու են Ազգ. վարժապե-
տանոցի մը գոյութիւն տալու եւ
անոր յարատեւութիւնը ապահո-
վելու համար:

Մեր ապագայ սերունդին դաս-
տիարակութեան գործը եթէ կա-
րեւոր տեղ մը կը բռնէ Երուսա-
ղէմայ եւ Սսոյ միաբանութեանց
մտքին մէջ եւ եթէ Ամենայն Հա-
յոց Հայրապետը հիմնական բարե-
շրջում մը ազգին մէջ առաջ բե-
րելու անկեղծ ցանկացող է, որուն

չենք տարակուսիր, պէտք է ուժ-
տան Պոլսոյ Պատրիարքարանի
ջանքերուն վարժապետանոց մը
հիմնելու գործին առթիւ:

ԿՍՊԱՆՆԵՆ

Հետեւեալը ՕՌՕՌԵՆ կը քաղանկենք:

Չինացիները օտարները վանելու
վրայ են: Մօտաւորապէս 60 տա-
րի կայ որ Եւրոպացիք անոնց քա-
ղաքները զարկին, պալատները ա-
ւարի տուին, եղբայրները կաւը-
տեցին եւ երկիրը քանդեցին, բա-
տիպելու համար դռները որ ինք-
զինքնին ափիոնով թռչուաւորն,
ահա պատճառը անոնց զայրոյթին:
Եւրոպացիք դռն դռն մը կ'ար-
ժանանան:

Չինացիք, վրէժխնդրութեան
համար, Արեւմտեաններուն վրայ
այն խժգոն իւնները ի գործ կը
դնեն, ինչ որ նոյն Արեւմտեաննե-
րը կընեն անյապարար Ափրիկեան
սեւամորթներուն:

Այդ մարդիկը երբ պատերազ-
մելու արհեստին մէջ գերման ըս-
պաներու միջոցաւ կը մարդուէին,
միեւնոյն տեսն մեր քահանանե-
րէն, վաճառականներէն վերապէս
մերիներէն կ'ներք պղծել ու վերա-
ւորներ սպաննել սովորած ըլլալին
պիտ' ըսեն իրենց բանտարկեալները
այն անմասն նրբութեամբ կը չար-
չարին, ճիշդ ինչպէս որ կընեն
Պաղլիսոցի զլխաւոր պաշտօնատար
ները հանգէպ Ֆրանսայի զինուոր-
ներուն զինուորական բանտերու
մէջ:

Յանուն վարդկութեան պատուին
պէտք է վերջ մը դնել այս ամե-
նուն:

Նոյն իսկ Սոյի մանի կառավա-
րութիւնը երեք չորս հարիւր
հազարէն աւելի քրիստոնեայ հա-
յեր եւ մահմետական երիտասարդ-
թուրքեր խողխողեց, հազարա-
ւոր կ'ներք ողջ պլ ջարիւղով ալ
րեց, նոյնպէս անթիւ մանուկներ
իրենց հօրը ծունգերուն վրայ
մորթեց, եւ ամբողջ ազգ մը բնա-
ջինջ կընէ: Եւրոպան չը շահագր-
գուցեցաւ եւ անկարեւոր դէպքի
մը պէս կ'անցնի: Հայաստանի
դահիճները իրենց դանակը զոհե-
րու կողորդին մէջ խոթելով
կը պոռան «Վեհապետը արտօ-
նեց» իսկ Ապտիւլ Համիտ կաւե-
ցնէ «Եւրոպան է որ կը թողա-
տէ»:

Այսօր Չինացեաց բարբարոսու-

Թեմէն կը դադարէր այդ մեծ ու ճիւղերուն հեղինակը, որովհետեւ Եւրոպան այսօր կը դադարէր իր իրենց հաւանած էր Արեւմտեան Ասիոյ մէջ:

Այս տարբերութիւնը, հաւանաբար Օսմանեան պաշտօնի մը գոյութեան և Չինական պաշտօնի մը չգոյութեան արդիւնքն է:

Չինացիք միայն իրենց բրնձի արտերը կը ջրին. իսկ եւրոպական մասունքն ու պետական մարդիկ կը, չնիկ աստղին ազդեցութենէն պաշտպան կուգին անոնց սովորն. ցնել թէ ինչպէս ապրելու է:

Ասոնք կը թելագործեն Գաղղիացի Պօքսէրներուն մեր երկիրը գտնուող Չինները կոտորելու, Եւ միւսներն ալ Բէքիւնի բնակչութիւնը կը պահանջեն:

Պ. Կոնստանտին քաղաքապետական ժողովի ազգայնական նախագահը կգրէ Բաթրիի յուլ. 17 թւին մէջ:

«Չինի մէջ, որ ովկէանոսի մը պէս խաբուղ (.) է, ուր աներեւոյթ հովեր առաջ կուգան, կը բաւէ միայն 20-30,000 հոգիի մը չափ, «սպաննել», «կախել», հրացանի բռնել ով որ ալ պատահի»:

Դժբաղդաբար այս 20-30 հազար հոգին և իրենց 3-4 հարիւր միլիոն հայրենակիցները չպիտի ձգեն ընել այդ:

Թերեւս մեզիք 20-30 հազար պիտի զարնեն:

Արիւն, արիւն:

Եւ որոնք պիտի զարնեն Չինացիք զոր կուգեն զարնել:

Ինչ է այն կենդանեաց խումբերը որոնք այս ժամուս տենդոտ փութկոտութեամբ մը կը փոխադրուին. եւ նաւերով կառաջնորդուին դէպի սպանդանոց: Ասոնք ժողովուրդի զաւակներն են:

Հանրապետութեան բարիքները, թեմէն թիւ, ջերմի, թանջքի զոհերն են, այսինքն երեք տարի ծառայելու սահմանուած զինուորները, հողագործութեան, հանքերու եւ գործարաններու մէջ աշխատող գործաւորներու զաւակները:

«Պուստուլ»ներու զաւակները որոնք մէկ տարի ծառայող զինուորներ են, չեն երթար, եւ բնական երթար:

Ինչո՞ւ այս անգամ ալ անոնք չեն խրկուիր: Ամենը իր կարգին, Թոնքիւնի, Մատակասկարի և Սուտանի արշաւանքները 3 եւ 5 տարուան համար զէնքի տակ առնուած զինուորներով կատարուեցան. կառավարիչներ որ — փոփոխութեան մը համար — Չինացեան արշաւանքն ալ մէկ տարի ծառայող զինուորներով ըլլալ:

Կամ աւելի լաւ է այս պատերազմին խրկուին վանականները ու կղերանոցներու աշակերտները: Ասոնք են որ Ծայրագոյն Արեւելքի պատերազմին պատճառ տուին: Ասոնք իրենց հաւատքին համար կայրին ու կը մեռնին: Կատաղի հայրենասէրներ և անոնք, իբրեւ սպայ իրենց աշակերտները պիտի ունենան:

Պարկը կոնակնիդ, արեղաներ, Պարկը կոնակնիդ պզտիկ պուստուլներ, Պարկը կոնակնիդ ազգայնականներ:

Երբեք չեն այսպէս պիտի ըսէ եթէ իր զաւակներու կեանքը պահել կուգէ:

Ինչպէն կ'օհիէ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՆ

Բարիկ 23 յուլիս 1900

Խաղաղութեան կոնֆերանսիս

Վաղը՝ յուլիս 31, առաւօտեան ժամը 10ին Ֆրանսական Ծերակոյտի պալատին մէջ պիտի բացուի երեսփոխանական միջազգային երկրորդ համաժողովը, ընդ նախագահութեամբ Պ. Ֆալէռի Ծերակոյտի նախագահին, Բազմաթիւ և կարեւոր խնդիրներու վերայ պիտի խօսին, մասնաւորապէս պիտի զբաղին Հարաւ-Արեւելեան պատերազմներու ներկայացուցած խնդրագրով:

Պօէր ներկայացուցիչները իրենց խնդրագրոյն մէջ առաջ կը բերին այն իրաւունքները որ ունին թերականգնողի վրայ, որուն գրաւումը իրենք օրինաւոր կերպով ըրած յետոյ իրենք իրենց խնդրով երկրորդ բարեկարգած, արդիւնաւորած և հարստացուցած են, ուստի իրաւունք ունին իրենց անկախութեան: Թէ իրենց երկիրը վարչի մնար եւրոպական կամ Ամերիկեան ու եւ երկրի կամ պետութենէ, Թէ իրենց գաղութները իրենց երկիրներէն գերազանց չեն, թէ թրանսպալի համարը այնքան մեծ է որ ամեն երկիրներէ օտարականներ հոն կը թափին եւ կուգին քաղաքացիութեան իրաւունք ստանալ: Եթէ կուգեն մեր հողին տիրել, կրնան Պօէր ներկայացուցիչները, պատճառ այն է որ մեր երկիրը աղամանդի և ոսկրի հանքեր ունի: Մենք ամեն միջոց ի գործ դրինք, պատերազմէն առաջ, խնդրել խաղաղութեամբ վերջացնելու, բայց անկարելի եղաւ, վասնզի Անգլիա յենու կուգէր մի իրաւունքի վրայ զոր չունէր:

Մենք ստիպուեցանք զէնքեր գրել և պէտք եղած զգուշութիւն:

Ներք ձեռք առնել մեր անկախութիւնը պաշտպանելու:

Պատուիրակները կաւեցնեն ըսելով թէ իրենք վստահութեամբ կը դիմեն համաժողովին, որ կապուած է ամենաքաղաքակիրթ երկիրներու երեսփոխաններէն և ներկայացուցիչներէն:

Համաժողովին միջամտութեամբ հարաւ Արեւելեան պատերազմը կրնայ վերջանալ և այս գործը լուրջաբար կանխագնէ միջազգային երեսփոխանական միութիւնը:

Չինաստանի համար գորագործութիւն

Քանի մը օրերէ ի վեր Բարիկ պատերազմը վրայ փակցուած են պաշտօնական լայտարարութիւններ (պաշտօնական լայտարարութիւնները միշտ ճերմակ թղթի վրայ սեղանով լինելու են) որոնք Չինաստան մեկնելու համար կամաւոր զինուորներ կը խնդրեն: Կառավարութիւնը կոչում կընէ նախկին զինուորներուն, պահեստի զինուորներուն և պարզ մարդոց գրոյակի տակ հաւաքուելու և Չինաստան մեկնելու իրրեւ կամաւորներ: Կը խոստանայ 200 Ֆրանք վճարել մեկնելու պատրաստակամութիւն ցուցնողներուն, իբրեւ հատուցում իրենց խանգարման:

Արդէն շատ թերթեր հրատարակեցին թէ Բարիկի մէջ հաստատուել է, մի քանի ամիսներէ ի վեր գրադարան ընթերցարան մը ու կը ստացունին 30ի չափ հայ և օտար թերթեր:

Այդ գրադարանը — ընթերցարանի ընկերութիւնը անցեալ ուրբաթ երէկոյ երեկոյթ մը հաւաք, որուն մասնակցեցաւ իտալիայէն նոր վերադարձող մի երիտասարդ հայ:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՅԵՐ

(ՊԱՏԿԵՐ ՄԵ ՏԱՃԱԿԱՅԱՅԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

[6]

Ե

Երկա՛ր դարերէ ի վեր, կրօնքի ու ազգային աւանդութեանց բարոյական ուժով իր գոյութիւնը պահող ժողովուրդի մը պէս, շատ լուրջ ու շատ քանաւոր էր ամենէն առաջ իրենց մէջէն, ամենէն յարմար քահանայացու մը ընտրելու: Որպէս զի աս քահանան իր բարձր կրօնական քիչ շատ համապատասխան ձիրքերով, իրենց մարմնաւոր ու հոգեւոր պէտքերուն գիտակցօրին սատարող մը լինի: Սա ի հարկին, իր անձը իր հոտին վրայ դնելու քաջութիւնը ունենայ: Ասոնք, իրենց հանգուցեալ քահանաներու ու անձնագոհ ուսուցչի կեանքով, գործնապէս սերտած էին որ, կղեր մը իր սեւ սքէմի ներքեւ՝ միակ կնիւնք ընող ու մեռել թաղող չէ: Ասոնք՝ փորձով տեսած էին որ, զօրաւոր նկարագրի ու ազնիւ մտքերի տէր կղեր մը, ո՛րքան ա՛լ համեստ ըլլայ իր մտքի պողարն, ու գիտութեանց ընդարձակ ծանօթութիւնները թերը, սակայն՝ գաղափարական քահանայ մը աւելի շատ արդիւնաւոր գործ կրնայ տեսնալ ու իրենց նման գեղջուկներուն դրապէս օգտակար ըլլալ, քան ցրեղապետ մը կամ տոհմիկ համփայ մը:

Այս անկեղծ ու առողջ մտածումներու լայն խոր-

հուրդներով, իրենց առաջին որոշումը կը ըլլայ, գիւղի մէջ իրենց անկեղծութիւններով ու քաջութիւններով նշանաւոր, երկու բարեկիրթ երիտասարդներու վրայ վիճակ ձգելու: Ու վիճակը կ'ենէ Վահան Վարազդատեանի:

Գիւղական ազ ժողովը իր խորհրդակցութեան արդիւնքն ու բացարձակ ընտրութիւնը չուտով կը յայտնէ իր ընծայացումին: Ու ժամանակ կուտայ անոր երկա՛ր, շատ երկար մտածելու ու ինքզինքը աղէկ մը հարցաքննելու ետք, վերջին պատասխանը հաղորդել... տասն եւ հինգ օր չարունակ, Վահան Վարազդատեան, գիշեր ցորէկ կը մտածէ կը խորհի ու կը խորհրդածէ, ու իբր մարդ, իր ստացած նախնական առողջ ու անխաղախ դաստիարակութիւնը, ու իր հայրենասէրի անզուսպ սէնքը իրենց ամենահորեղ թելադրութիւններով կը մզնէ զինք համակերպելու գիւղի համայնքի բաղձանաց: Այն դադափարային տենդոտ ցանկութիւնով նա քահանայական սքէմի ներքեւ, իր իրացուցած ազգասիրական ու հայրենասիրական մտքերը իրագործելու, ու իր ծըննդավայրին ու համագիւղացիին կարելի եղածին չափ օգտակար լինելու ամենէն նպատակայարմար միջոցը՝ ա՛յդ նուիրական կոչման գիտակից պաշտօնավարութեան մէջ կը տեսնէր:

2.

Քառասունքի խորհրդաւոր մէնակեցութենէն ետք, նորընծայ Տէր Վահանը՝ իր անդրանիկ պատարագը կը պատրաստուի մատուցանել, իր Հայրենի գիւղի այն տաճարի մէջը որ, դարերու հազարի հոլովմամբ ազգային կեանքի մէջ, ամենէն սուրբ ու ամենէն զօրաւոր կապերով իրենց գոյութեան հետ զօղուած է:

Բոլոր գիւղը ոտքի վրայ է, քանի մը ողակէզներ կը կտրուին, ու եօթն կարաւ լեցունիկ խրիսայ դրնելու ընդհանուր պատրաստութիւն կը տեսնուի իրենց սիրելի նորընծան, քառասունքէն պիտի ելնէ, ու իր անդրանիկ պատարագը պիտի մատուցանէ:

«Անդրանիկ պատարագը» այն խոր նշանակութիւնով ըմբռնած է մեր երկրի ժողովուրդը՝ ինչ մեծ հաւատքով որ կը վերաբերի նա զէպի իւր եկեղեցին ու իր հաւատքը: Մանաւանդ որ, նա, այդ նուիրագործման մեծ խորհուրդի մէջը, մատուցող վրայ այն աչքով էր նայի, ինչ խանդով ու հետաքրքրութեամբ որ կը լսէ, ու սերտած է, «Տէր Յուսական որդու» կեանքի ու անոր «անդրանիկ պատարագ»ի պատմութիւնը:

ՂԱԶԱՐՈՍ Պ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

(Շառունակեղի)



ԼՐԱՔԱՂ

երգիչ, երեկոյթին ժամանակ երգեցողութիւններ: Խմբովին կամ առանձին պարեր և նուագածութիւններ տեղի ունեցան: Ներկայ էին բառասուն յիսունի չափ անձինք, որոնցմէ մօտ 10ի չափ հայ տիկիններ և օրիորդներ:

Մի կարծէք թէ այդ օրիորդները կամ տիկինները Բարիզի մէջ բնակող հայերէն են, ո՛չ երբէք. անոնք շատ դժուարութիւններով կը տեղափոխուին:

Այդ տիկիններն ու օրիորդները այն հայերէն էին որոնք Յուդա-հանդէսի առթիւ ժամանակաւորապէս Բարիզ կը գտնուին և որոնք լսելով որ հայկական երեկոյթ մը տեղի կ'ունենայ հետաքրքրուելով եկած էին:

Կը լսենք թէ ընկերութիւնը միտք ունի աւելի մեծ երեկոյթ մը ուրբել քիչ ատենէն, նոյնպէս ինպատ զբաղւարան-ընթերցարանին: Թաղութիւն կը մաղթենք նորահաստատ ընկերութեան:

Ս. Գ.

ԻՐԱՅԻՆՈՒՆՔԻ ՊԱՏՃԱՍԽԱՆՆԵՐԸ

Ա. Պ. Ալմէնք. — Արծրունի բա-հանան Պուրկազ կը գտնուի:

— Տ. Շահն. Սիշթօֆ. — Ձեր թերթը դադարեցուցած ենք. բաժնեգիրներ չենք ստացած:

— Ա. Շ. և *** Թ. Բազարճըզ Ստացանք ձեր նամակները տեղւոյդ թաղ. խորհրդոյ ընտրու-թեան և վարդապետի ընթացքին թեր ու դէմ գրուած. չը պիտի հրատարակենք զանոնք, քանի որ ձեր գրութիւնները մինչեւ ցարդ հրատարակուածներու կրկնութիւն-ներն են: Միայն անգամ մը հաս հրապարակաւ մեր փափաքը կը յայտնենք որ Գեր. Այցելու հովի-ւը հաճի խնդիրը մօտէն քննել եւ գայթակղելը մէջտեղէ վերցնել, որպէսզի խռովութիւնը վերջանայ և եկեղեցին ու վարժարանը չի տուժեն և ըստ առաջնոյն խաղաղ ու կանոնաւոր ընթանան:

— Շուսէնի և Սիւլէի մեր այն պատուարժան բաժանորդները՝ որոնց քօսքի միջոցաւ ընկալագիր-ները զրկած էինք զորս չի վճա-րեցին, թող հաճին այլեւս չի յա-պաղեցնել իրենց բաժնեգիրները, նկատելով թէ լրագրի մը հրատա-րակութեան բոլոր ծախքերը կան-խիկ կըլլան և հետեւաբար մենք լինք կարող տարիներով սպասել բաժնեգիրներու գանձումին:

Կը խնդրենք որ նոյն նկատա-ւութիւնը ունենան մեր այն ամեն բաժանորդները որոնք ներկայ տար-ւոյ համար բան մը դեռ չեն վճարած:

Պատրիարքը՝ իտալիոյ Ուժպէր-թօ թաղաւորի մահուան առթիւ իտալական դեսպանատունը Կրթա-լով, ցաւակցական այցելութիւն մը տուած է. նոյնպէս հեռագիր մ'ալ ուղղած է Մոնցա, Մարկա-րիթա թագուհիին: Ասոր ի պա-տասխան Այրի Մայր թագուհին, իր դիւանապետին միջոցաւ, հե-ռագրաւ պատասխանելով շնորհա-կալութիւն յայտնած է Պատրիար-քին, իր արտայայտած ցաւակ-ցութեանը համար:

Նոյնպէս Պատրիարքը Անգլիա-կան դեսպանատունը երթալով իր ցաւակցութիւնները յայտնած է թագուհիին երկրորդ օրդուոյն, Ալ-ֆրէտ դուքսին մահուանը համար:

— Կիլիկիոյ կաթողիկոսական տեղապահ Տ. Կիրակոս եպիսկոպոս Կիլիկիոյ շատ մը թեմերը անհո-վիւ մնացած ըլլալը յայտնելով, Պատրիարքանանէն մէկ քանի կա-րող եկեղեցականներ ուղած է, ե-րեսի վրայ մնացած այդ վիճակնե-րուն համար:

— Ռուսահայ հաւրածոն իր րապարկագիր և բարերար Պր. Չանչեանցի մահը կիմանաք Պու-սական թերթերէ: Հանգուցեալը առանց հարուստ ըլլալու, լոկ իր հրատարակութեանցը շնորհիւ գա-ւառական 12 որբանոցներ հիմնած էր և կը պահէր:

Պ. Չանչեանց հազիւ 40 տարե-կան էր. իր մահը մեծ կորուստ մէ ազգին համար:

— Սուլթանը Պատրիարքարանի ծախքերուն առթիւ 500 լիրա նը-ւիրած է:

Հայոցմէ յափշտակուածներուն քանի՞ հազարերորդ մասն է . . .

— Սուլթանի գահակալութեան 25 ամեակին առթիւ մեծարժէք գեղարուեստական ձօն մը կը պատ-րաստուի, զոր նոյն օրը Պատրի-արքը յանուն ազգին պիտի մատու-ցանէ Սուլթանին:

Որուն իշխանութեան ատենը նոյն ազգէն 300000 հոգի կորստու-ցան և 80,000 տղաք որբ մնացին:

— Պատրիարքարանի խառն ժո-ղովը իր վերջին նստին մէջ որո-շեց մերժել գաւառային Առաջնորդ-ներու եւ Տեղապահներու կողմէ զրկուած հրաժարականները:

— Վանայ մէջ այս տարուան բերքերուն առատութեան շնորհիւ ցորենին գինը զգալի կերպով ին-կեր է:

— Բեթերսպուրկի Հայոց եկե-ղեցին տարեկան 40,000 րուբլի եկամուտ ունենալովը հանդերձ ա-ռանց ծախսելու տեղ մը ունենա-լու, չէր ուղեր օգնել Մոս-քուայի Հայոց եկեղեցիին: Այս անգամ այդ երկու քաղաքներու եկեղեցիին հոգաբարձու, իշխան Աբամէլիք-Ղազարեանց կը դիմէ Ս. Հայրապետին, որ մասնաւոր կոնդակով հրամայած է Բեթերս-պուրկի եկեղեցւոյ վարչութեան այսուհետեւ տարեկան 15,000 րուբ-լի վճարել Մոսկուայի եկեղեցիին:

— Աստրախանի Առաջնորդ Ա-րիստակէս Արք-Եպիսկոպոս Սեդ-րակեանց. իր թեմի քահանանե-րէն Տ. Մեսրոպ Գուլամեանցը՝ Սիպերիայի հայաբնակ տեղերը հովուելու եւ հոգեւորապէս մխի-թարելու համար մշտակալ քահա-նայ նշանակած եւ զրկած է:

Հայր Գուլամեանց՝ Սիպերիոյ իրքութեք քաղաքը հասնելով, այն տեղի եւ շրջականերու սակաւա-թիւ հայերը մխիթարած ու հա-ղորդած է: Տարեկան 360 րուբլի վարձքով տուն մալ վարձած է եկե-ղեցի ընելու համար:

— Չմիւռնիոյ ծանօթ ազգային ներէն ֆանսան էֆէնտի տիկ-նոյ մօրեղբայրը Սարգիս էֆէնտի անուն յիսնամեայ անձ մը ահաւելի ոճրի մը զոհը եղած է:

Փոստման էֆէնտի եւ տիկինը բացակայ կը գտնուէին տունէն, ուր մինակ կը մնար իրենց մօրեղ բայրը. երեկոյ մը ժամը 2ին (ը. թ.) այդ տունէն մուխ ելլելը կը նշմարուի. անմիջապէս քաղա-քին զինուորական ջրհանկրաց խում-բը կը փութայ հրդէհին վայրը. եւ ջրհանկրացեալներ ներս կը մտնէ գոնէն. երբ մէկ կողմէն ալ կաշ-խատէին մարել կրօնը. հոն կը տեսնէ Սարգիս էֆէնտի անկեն-դան մարմինը որ կայրի: Կատա-րուած քննութիւնէն հասկցուած է որ Սարգիս էֆ. նախ խեղդամահ եղած եւ յետոյ տունը կրակի տրուած է ոճրին հետքը կորսնցը-նելու համար:

Ոճրին շարժառիթը գողութիւն ըլլալ կը կարծուի:

ԱՅԼ ԵՒ ԱԼՅՔ

Պարսից Մոզաֆֆէրէտտին շա-հը. — Շահը յուլիս 23 շաբաթ օր առաւօտեան ժամը տառնին հա-սաւ Ժէօմօնի կայարանը, որ կը գտնուի Բարիզի ճամբուն վրայ, Պարսիկ վեհապետը ընդունուեցաւ Բարիզի պարսկական դեսպան Նա-զար աղայի և որդւոյն Արտաշիւ-րան Նազար աղայի և այլ ֆրան-սացի բարձրաստիճան, թէ՛ քա-ղաքային և թէ՛ զինուորական պաշտօնատարներու կողմէ:

Շահը ժամ մը հանգիստ առ-նելէ վերջ, նախագահական շքեղ կառախուսքով մեկնեցաւ Ժէօմօն-էն և կէս օրէ վերջ ժամը 3 ու կէսին հասաւ Բարիզի Նօն կայա-րանը, հոն ընդունուեցաւ հանրա-պետութեան նախագահ Պ. Լու-պէյի և իր հետեւորդ շքախում-բին կողմէ, ուր փոխապարձ ներ-կայացումները կատարուելէն վերջ նախագահն ու Շահը մէկ կառքի մէջ նստած մեկնեցան. զինուորա-կան պատիւներ եղան և անթիւ ամբոյս մը որ վեհապետին անցնէ լիք ճամբաները բռնած էր, կեց-ցէնիւրով օդը թնդացուցին:

Նախագահին և Շահին նստած կառքին հետեւէն 11 շքեղ լանտոն-

ներու մէջ բազմած էին Շահին բազմաթիւ հետեւորդները:

Շահին բնակութեան յատկաց-ուած է վեհապետաց Պալատը, ուր իրեն հետ պիտի գտնուին պալատան նախարարը ու իրեն յատուկ սպասաւորները:

Եզակաւն դատ մը. — Ամերիկա-յի՝ այդ արտակերպողներու երկրին պզտիկ քաղաքներէն միոյն մէջ, աշխարհի սկիզբէն մինչեւ ցարդ նմանը իսկապէս չը տեսնուած դատ մը այս օրերս դատարանի յանձնուած է:

Եանքի մը գետը ինչալով խեղ-դուելու վրայ էր եւ օգնութիւն կը պոռար: Գետեղերքը գտնուող ձկնորս մը կը փութայ օգնութեան հասնելու եւ իր ձեռքի ճանկը մար-դուն բալթօյին անցնելով զայն կազատէ:

Բնական է որ բալթօն պիտի պատուէր:

Արդ՝ այդ անօրինակ Եանքին մահուան անխուսաբելի վտանքէն զինքը ազատող այդ ձկնորսին դէմ դատ բացած է «բալթօն» պատ-ուած ըլլալուն համար:

Ամերիկայի դատաւորք տակա-ւին վճիռ մը չէն տուած:

— Լօնտօնի կաթօլիկ Արք-Ե-պիսկոպոսը Թալմզ գետին եզեր-քը պտըտած միջոցին վեց տարե-կան տղու մը հանդիպելով կը հար-ցնէ թէ եղբայր ունի: Տղակը քիչ մը մտածելէն վերջը կըսէ «ոչ բայց մայրիկս կըսէ թէ այս օրե-րս ուրիշ Պէպէ մը պիտի ծախու-առնէ. միայն թէ տակաւին յայտ-նի չէ թէ այդ պէպէն քոյր պի-տի ըլլայ ինծի թէ եղբայր, վա-սըն զի ինքն ալ որոշած չէ գեռ»:

ՆԷՏԱ

ԿՍՄ

(ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱԾԸ)

Պուլկարիոյ ազատութենէն ա-ռաջ Պուլկար ժողովուրդին նիստ ու կացը և թրքական հարստահա-րութիւնները նկարագրող այս գոր-ծը կարծէ որ ամեն հայ կարգա-յի ծախուի իրաւունքի խմբա-գրատունը, Ֆիլիպէ Պ. Գ. Թիւ-թիւնճանի քով և Գահիրէ Պ. Կ. Երզնկացիների խանութը:

ԿԻՆ 50 ՍԵԹ.

ՁՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տպագ-րական տառեր մասնաւորապէս Հա-յերէն եւ Թուրքերէն, էսպաս, ան-թէրլիներ, գիծ եւ կառնիթիւր, Գիծերը յոյժ գիւրամատչելի:

Հասցէ՝

Agop Dzerounian

(Bulgarie)

Sofia

ԹԻԻՐԻԱ ՆԱԿԱՏԻԱԹԸ

Սուսամ ատասը վախիտ օրուպ, Սուլթանըն զայեթ էմիրիթի մէ- մուրարընտան պուրնան վախտանի պէյին ազը իլէ, ետրինէ Բուսիա- նըն թէքլիֆ իթմիշ օլտըր Գոնս- թանթէն Գարատորոնին Սուսամ վախիկինէ թախին օլտնաճաղը ըՍ- թանպուրտան վէրիլէն պիր թէլէկ- քաֆտան անլաշըմըն տըր :

—Միւթէվէֆա Գրալ Ումպէր- թոնըն ճէնազէ ալալընտա պուլըն- մագ, վէ Գրալը ճէտիտ վիթթօր էմմանուէլին թախթա ճիւլիսինի իթէպրիթ իթմէթ իշիւն Սթանպու- տան պիր ճէյթթը մախսուսա Բօ- մայա կէօնտէրիլմիշ տիր :

—Սըրպիտաա նէշր օլտնան «Վէշ րինէ Նոպուտի» նսմ կազէթա Անորոգտա գարըշըրգուր զու- հուր իտուպ պալը թէլէֆիթա զուգու պուլտըրըն եագմագտա տըր :

—Սանտան վէրիլմիշ պիր թէ լէկրաֆա նազարէն, Եմէն վիւա- յէթինին Ումրան սանճաղընտա Բէքէպ աշիթթէլէրի ալազանմըն օլուպ, իւզէրլէրինէ իքի ալալ- սակէր կէօնտէրիլմիշ տիր :

—Հալէպ վալիի ճէտիտի Էնիս փաշանըն մէմուրիթիլին թա- տիգ իտէն ֆէրման, Հալէպտէ, հիւթիւմէթ տուրիւսինտէ գիլնէթ- լէ օգոնմըն տըր :

Իշպու Էնիս փաշա Տիարպէրի վալիսի իքէն օրատա Էրմէնի գըր կընըն իճրա իթտիլմիշ մէշուր ճանի տիր քի, Սթանպու սէֆա- րէթլէրի պուլըն վալիլիկէ թա յին օլտնաճաղը գարըն չիքայթթ տէ պուլընտըր :

Հալէպ էնէպի գօնսուլալար վա- լի Էնիս փաշա իլէ հիշ պիր ալա գատա պուլընմայաճաղար :

ՍԻԻԹԵՆԵՎՎԻՅԵ

Ինկիլթէրա հարպիյէ նէգարէ- թի միւթէշարը բարըմանըն սօն իճթիմալընտա թորանպուլ մուհարէպէսի իշիւն չիմտիյէ գա- տար 61 միլիօն 22,700 ինկիլիզ լիւրաը մէսարիֆ օլտըրըն, վէ չիմտի Ճէնուպի Աֆրիգատա 189, պին սակէր մէվճուտ օլուպ պուլն- լարտան 135,000 ի մուհարէպէսին նիհայթթինտէ ալտէթ իտուպ, եա լընը 45,000 ի մուհարէպէս օլարագ օրատա պրագըլաճըրըն պէյան իթմիշ տիր :

—Ճէնուպի Աֆրիգատան ալը- նան էն սօն հալաթիլէրէ նազա- րէն, Ուանթ ճուհուրիլթիլին իթիսինտէ մատաա ումուս վիւթէ- լա վէ րէճալարը ինկիլիզլէրէ թէս լիմ օլուշար :

—Շոնտրատան 30 Յուլիս թա- րիսի իլէ վէրիլէն պիր թէլէկրա- ֆա նազարէն, Պօէր ժէնէրալը Բրէնսու 5000 քիշի իլէ ինկիլիզ- լէրէ թէսլիմ օլուշ տըր :

—Մ. Գրիկէր մէյտանտա գա- լան ումուս Պօէր գօմանտանլարը- նա լէտինպուրկտա թօփուսմալա- րըն էմր իթմէշ :

—Բարիպտէ պուլրնան Աճէմ Շահը, կէշէն ճուստ սապուհաը հիւթիւմալարա մախսուս սա- լալտան չըգարագ եանընտա սատ- րալամ վէ գարընտա պիր ժէ- նէրալ օլտըրըն հալտէ բայթօն իլէ կիթմէքտէ իքէն, իշի կէօմլէկի կիթմիշ պիրիսի հէման բայթօնըն պինէթ ալաղընըն իւզէրինէ չը- գուպ, էլինտէքի րէվօլթէրի Շահա տօղրուլթմապնտա վէզիլի սէրհալ րէվօլթէրի էլինտէն գարմըն. օրա- տա պուլրնան բօլիսլէր եէթիշապ տէրտէսթ իթմիշլէր, Շահ պիւա- ֆիթուր Եօլընա տէլամ իթմիշ տիր :

Ճանի իթմիլթագընտա Շահը Եօլտիլթէթիլինտէն տօլալը թէ- էսիւֆինի պէյան իթմիշ վէ ճիւլա- րընտա պուլընան մէմուրարա իլա վէթէն, «սիգիլն էֆէնտիլիգէ սէօյ- լէնի իթթիֆապըն վէրսին, աքսի հալինտէ պիզ ալապիլիլիլ» տէմիշ տիր :

—Օտէստան Տէլի Նիւզէ վէ- րիլէն պիր թէլէկրաֆա կէօրէ, էվ- վէլթի բաղար, բաղար իրթէսի վէ սալը կիւնլէրի Օտէսանըն եահու- տի մահալլէրինտէ գարընզըրգ- զուհուր իտուպ, եահուտիլէր իքի սակէր Եօլտիլթիլլէր վէ քէնտի լէրնտէն 120 քիշի եարալանուպ, հասթահանէյէ նազլ օլտնըշար, բէթ չօդ տէ հահուտի մազաղալար եանմըն տըր. 1200 քիշի հիւթիւ- մէթ թարաֆընտան տէրտէսթլէ տասիշ իպգա օլուշ :

—Ինկիլիզ կազէթալարընն նէշ րիաթընտ նախալէն, Մ. Ամերիկա հիւթիւմէթի աթիլտէքի պէշ շարթ լար իլէ Գուպա առադընը միւս- թագիլ իլան իթմէթ նիշէթինտէ իմիշ :

1. Ատա, Մ. Ամերիկա հիւթիւ- մէթինին վասթթալը իլէ եալընըզ տիւվէլը սալիլթէ իլէ ալաքատա պուլընապիլէքէ :

2. Մ. Ամերիկանըն րէյի օլմա- տըքճա իլան հարպ իտէմէյէքէք :

3. Ատա իթթիլգրագ իթմէք ալ- զուլընտա պուլընտըրընտա, սօն րէյ Մ. Ամերիկա հիւթիւմէթինին օլաճագ, վէ ստա նէ մըգտարա գա տար պօքճ իտէպիլէքէկիլինտէ Ա- մերիկա հիւթիւմէթի թալին իտէ- ճէք :

3. Գուպա մալիյէսի Մ. Ամերի- կա հիւթիւմէթինին թահթը նէզա րէթինտէ պուլընաճագ :

5. Մ. Ամերիկա հիւթիւմէթի պիր գաշ սէնէ առանըն փայթա- թը Հալալան չէրիլինտէ վէ պազը էշէմիլթիլի նօզթալարտա մուհա- ֆըզ սակէրլէրի պուլընտըրընտա :

—Գրալը ճէտիտ վ. էմմանուէլ զէվճէսի իլէ բէտէրիլին վէ վալի- տէսիլին պուլընտըրըն Մոնցա շէհ- րինէ վիսուլինտէ չըմէնտըքէր ըս- թասիլթընտա խանէտանը գրալի ազալարը վէ տհալի թարաֆընտան

գապուլ օլտնըն տըր : Գրալ վէ վալիտէսի եէկտիլէրլէրինէ սարը- լարագ աղլամըշար : վ. էմմանու- էլ միւթէվէֆա բէտէրիլինն ճէսէ- տի պուլընտըրըն սալօնա կիրտիլին տէ հէման իւզէրինէ ալալարագ աղլարագ էօքմիշ : Կիւճ հալ իլէ պէրիլէ ալապիլմիշլէր :

Գրալ վէ Գրալիլանըն Մոնցայա վիրտտինտէ էհալի «Եաշաալըն գը րալըմըզ» տէյու ալաղըշար իքէն, իքի էնէպիլի քիմալէր տէ «Եաշա- սըն անարշիլթիլթ» պաղըրմըշ- լար : Պու իքի քիշի հէման տէր- տէսթ օլտնըն. էհալի պուլընա- րը քէնտի էլի իլէ բարալամագ ի- չիւն բօլիսլէրտէն ալապ իսթէմիշ- լէր իստէ վէրիլմէմիշ :

Գրալ Ումպէրթօլը թէլէֆ ի- տէն Պրէսիլին իսթիլթագընտա քէնտիլինն Ումպէրթօ կիպի զայեթ հալիմ, մաղլըմ, խալիլաճ վէ միլլէթէրվէր պիր գրալը նէ՝ իշիւն ուրտուղընը սօրուլմուշ իսէ Պրէսիլի գրալ Ումպէրթօլը ուրմա- ղա ճիտտէն պիր սէպէպի օլմա- յուպ, իլա սէվիլի պիր տտամ օլմաղընտան Եօլտիլթիլ օլտը- ղընը սէօլլէմիշ տիր :

Պրէսիլի Ամերիկատա իշի օլուպ բէթ րահալթ վաղըթ կէշիլթէքտէ օլտըրը վէ հալթթա օրատա է- վի, պաղը վէ բարասը պուլընտը- ղը անալըլմըն տըր : Պրէսիլին իթալիտա իքի գարտաշը պուլը նըպ պիրիսի սակէր զապիլթի վէ տիլէրիտէ գօնտուրաճը իմիշլէր, պուլընա գարտաշարընըն ճիւլիլթ- թիլին իշիլթիլլէրինտէ ֆէվգէլալտէ միւթէքսիլ օլարագ քէնտիլլէրի պի րատէրլէրինէ հէմէֆքիար օլաաղըզ լարը վէ անըն պու հարաքէթի ֆա միլեաճա թագպիլ իթթիլթէրիլին պէյան իթմիշլէր :

Ձ Ի Ն

Բէքին Բուս էլիսի Չիլիլիլէր թարաֆընտան թարիֆի զայրգա- պիլ մէշաքթալթա տիւշար իտիլտիկ տէն սօնրա անը սաղ ոաղ քէնտի զէվճէսիլին կէօրիւ էօնիւնտէ գալ նար զէյթին եաղը իշէրիլինտէ ա- թարագ թէլէֆ իթմիշ օլտըրըլարը Ամերիկա կազէթալարընտա օգոն- մըշ տըր : Չար պու խապէրի ալ- տըրընտա աղլամըն :

Պուլընուլըն տիպիլինտէ գըրըլան 300,000 էրմէնի իշիւն աճապա պիր տալա եաշ տէրքտիւ մի :

—Չիլիլին ալընան էն սօն հա- վատիլլէրէ նազարէն էնէպիլի օր- տուլարը Բէքինէ կիթմէք իւզրէ խալիլիլէ իլէրլէմիշ օլուպ, հէման պու կիւն եարըն եէթիլլէպիլէքէ լէր :

—Բուս տէօլլէթի իլէ Չիլի հիւ- քիւմէթիլին զապթ իթմիշ օլան Բրէնա Դուան պէյնինտէ Ասիայը եալընը քէնտիլլէրի զապթ իթմէք իշիւն հաֆի պիր գարար պուլըն- տըրը թալըն թէլէկրաֆ հալա- տիլլէրինտէն տիր :

ՍՈՓՈՒՐԱԳԶԱՆԷ "ՉՈՐԱ" ԵՐՈՒԱՆԻ ԹԵՐԶԵԱՆ

Իշպու ֆօթօկրաֆիստէ Սաքալ լը Չէշմէտէն Էսիի Գաղարմա մէ- տանընտա Ուլիցտ Սապոնա 218 նիւմէրօլու մահալէ նազլ օլտնըն տըր :

Միւրաճաթ իտէճէք զէվաթը մէմուլն պրագմագ իշիւն էհէն ֆիլաթիա զայեթ թէվիզ ֆօթօկ- րաֆիար Էնի ուսուլար իլէ չը- գարըլմագտա տըր :

«Չույն Հայրենեայ»

Լրագիր Ազգային գրական եւ ֆա- ղաքական կը հրատարակուի շաբաթ- սնդամ մը. կը պարունակէ լուրջ յոդ ուսմանը, անուսթիւններ եւ Ամերի- կայի հայ գաղթականութեան մասին շահեկան լուրեր ու տեղեկութիւն- ներ :

Բաժնեգրին է տարեկան 10 ֆր. Հասցէ American Hai Publishing & Co P. O. Box 379 Worcester Mass. (U. S. A.)

ԱՁԴ

Գրատանս հետ հաշիւ ունեցող- ներէն կը խնդրուի որ. մինչև այս ամսու վերջ փութան կար- գադրել և չր պարտաւորեցնեն զիս օրինական միջոցներու դիմելու :

Ա. Զարպիսանէյան

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ Ասատուր Յա կոբեան անուն երիտասարդը, 25 տարեկան, վանի Շահպաղու գիւ- ղէն, Պանքայի ցոյցին մեկնած է Պոլսէն գէպի Եւրոպա, կը խըն- դրուի ճանչցողներէ որ հաճին ի- մացնել իր ուր գտնուիլը իր հօր. եղբոր՝ Թադէոս Արատուրեանի, Ուն մէյտան, Ուսուճուք Պուլիա- րիա :

ՏՕՔԹ. Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Փոխադրած է իր բնակարանը ի Մուսալա փողոց, նախկին Չլաթնա —Բգէլային մօտ, ուր գարգ կը բնա- կէր Տօքթ. Սլաֆֆէֆ : Իր գարմանէ մասնաւորապէս կա- նանց, տղայոց եւ ծննդական գործա- րանաց հիւանդոթիլիններ եւ կը կատա- րէ մանկաբարձական գործողութիւններ : Հիւանդ կրնողունի ամեն օր, առա- լօտեան ժամը 9—12 եւ յետ միթթէ գամը 3 Ե :

ՏՊԱՐԱՆ "ԻՐԱՆԻՆԻՔ"

Գրքեր, տետրակներ, հրաւիրագրիլ, տոմարակներ եւայն կը տպագրուին ա- մենադիւրամատչելի գներով ու գոնա- ցուցիչ պայմաններով : Փրանսերէն, յուրաբէն եւ պուլկարեան փոքրիկ գործեր եւս կը պատրաստուին : Օտար երկիրներէ եւ ուրիշ քաղաք- ներէ եկած յանձնարարութիւնք փու- թով եւ ճշգիւ կը գործադրուին :